Համաձայնություն

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ

- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից հարցումներ կատարվեն «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, այլ ***վարկային բյուրոներին, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին*** և վերջիններիս խնդրում եմ Բանկին տրամադրել համապատասխանաբար իմ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ֆինանսական տվյալներ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք կարող են առնչվել ինձ հետ համապատասխան վարկային (փոխառություն և այլն) և այլ պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս, ինչպես նաև վարկային (փոխառության և այլն) և այլ պայմանագիր կնքելու դեպքում, այդ թվում՝ Բանկի կողմից մարքեթինգային և/կամ ինձ այլ բանկային ծառայություններ առաջարկելու նպատակով, տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի վերջիններս Բանկին տրամադրեն իմ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ֆինանսական տվյալներ, ինչպես նաև այլ տվյալներ:

  Ծանոթացել եմ վարկային պատմությանը և վարկային սքոր գնահատականի էությանը և դրա կարևորությանը, կիրառվող սքորի տեսակներին, սքորի վրա ազդող հիմնական գործոններին և տեղեկացված եմ, որ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին կարող են կատարվել հարցումներ համաձայն ներքոգրյալ աղյուսակի, որոնք կարող են ազդեցություն ունենալ իմ վարկային ամփոփ գնահատականի (սքորի)/օրինակ՝ Ֆայկո սքոր/ վրա.

Վարկային հարցման նպատակ	Ազդեցությունը վարկային սքորի վրա	Հարցման պարբերակա-նություն	Ժամկետ
Նոր վարկային դիմում*	Նվազեցնում է	Մեկանգամյա	Նոր ֆինանսավորման հայտի դիտարկման ընթացքում
Գործող վարկի մոնիտորինգ**	Չի ազդում	Պարբերաբար	Վարկային պայմանագրի գործողության ընթացքում
Այլ բանկային ծառայություններ	Չի ազդում	Պարբերաբար	Բանկում գործող ծառայության պայմանագրերի գործողության ընթացքում
*Այս նպատակով հարցում կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է նոր ֆինանսավորման հայտի դիտարկման համար: **Այս նպատակով հարցում կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է ֆինանսավորման տրամադրման և հետագա սպասարկման համար:			

- ***Բանկը ցանկացած պահի հարցումներ կատարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված Հանրային բազաներին, և բանկային սպասարկման ոլորտում հաճախորդների վերաբերյալ տվյալներ մշակող այլ անձանց, և ստանա իմ վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում՝ անձնական տվյալներ), իսկ վերոնշյալ իրավասու մարմիններին խնդրում եմ, հարցմանն ի պատասխան, ցանկացած հարցվող տվյալ (այդ թվում՝ անձնական) փոխանցել Բանկին, որոնք Բանկի կողմից մշակվելու են ինձ հասցեագրված ծանուցմամբ (այսուհետ՝ Ծանուցում) նկարագրված կարգով և ժամկետներում, որը հասանելի է Բանկի տարածքում և www.conversebank.am (https://www.conversebank.am/hy/customer-rights/) կայքում:***
- իմ անձնական տվյալները Բանկի կողմից փոխանցվեն «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ, ՀՀ Կենտրոնական բանկ և բանկային սպասարկման ոլորտում հաճախորդների վերաբերյալ տվյալներ մշակող այլ անձանց:

Հավաստում եմ, որ կարդացել եմ համաձայնությունը, ծանոթացել եմ Ծանուցմանը, որոնք ինձ համար ամբողջությամբ հասկանալի են և ընդունելի:

V